

ԺԱՆՏԵՍ

ԿԱՄ

ԲԱՂԴԻՆ ԺԱՊԵՏԸ

(Շարունակութիւնն նախորդ քիւէն եւ վերջ)

Ժանօթ կարծելով միշտ թէ հայրը զինքը կը հալածէ, երկար ատեն վազեց, մինչեւ որ երկիր մը հասաւ որուն իշխանին մէկհատիկ աղջիկը մեղամաղձութեան մէջ էր ինկած: Եօթը տարիներէ ի վեր մէկը չէր կրցած խնդացնել անիկա: Ոչ ոք կրցած էր դտնել այս ախտին ո՛չ պատճառը և ո՛չ ալ դարմանը: Բոլոր բժիշկները միաբերան յայտնած էին թէ գեղանի մեղամաղձոտ աղջկան մահը մօտալուտ էր: Իշխանը յուսահատ՝ ի ձայն փողոյ հրապարակել տուաւ իր մայրաքաղաքին բոլոր փողոցներուն մէջ թէ ո՛վ որ կարողանար խնդացնել իր աղջիկը՝ կնութեան պիտի տար անոր իր հարստութեան կէսն ալ միասին իբր օծիտ: Ժանօթ լսեց այս ազդարարութիւնը. հաստատամտութեամբ ապարանքը մտաւ և փորձ մը կատարել ուզեց յաջողութեան մասին կատարեալ վստահութիւն յայտնելով:

Հարկը ստիպեց որ՝ հակառակ իր ցնցոտիներուն (որովհետեւ հագուստները մաշած ու սպտուած էին) ընդունին զինքը: Մառանները հաւաքուեցան, և մեղամաղձոտ գեղանին նստաւ իր հօրը քով ոսկեհուռ մնդուսէ և ճերմակ փետուրէ հովանիով աթոռի մը վրայ: Աթոռին առջև զետեղուած էր մարմարինէ սեղան մը որուն վրայ Ժանօթ դրաւ իր երեք միջատները, հաստատ և բարձրաձայն ըսելով, բառապա՛, բառապի՛, բառապօ՛: Անմիջապէս ոսկեջրեակը սկսաւ իր կիթառը զարնել, ճպուռը երգեց իր անուշ երգը, և մամուկն սկսաւ պարը: Այդ օրը երկու նուագածուները կարծես իւրար գերազանցել և տաղանդնին ցուցունել կ'ուզէին. իսկ մամուկը՝ անբաղդատելի էր. նախ պարեց բոլոր հին ու նոր պարերը՝ բավան, մրմիւհ, կավօր, բասքիհ, որոց յաջորդեցին մազուրիան, սալբաւիլ, եւ բօլնեզը: Այս պարերէ վերջ սկսաւ վալսել կոտորտուելով, աջ ու ձախ բարեւելով և համբոյններ զրկելով ժողովականներուն: Այս պահուն մեղամաղձոտ բամբիշը չկրցաւ ինքզինքը բռնել, ինքն ալ մասնակցեցաւ ընդհանուր ուրախութեան և իր խնդուքը այն-

չափ ուժգին ու երկարատեւ եղաւ որ սկսան վախնալ թէ առաջքը չպիտի կարենան առնել: Իշխանը կը դողար թէ յետինն քան զառաջինն կ'ըլլար. այլ փառք Տեառն, չուտով այդ երկիւղը փարատեցաւ. բամբիշը իր քահաճաներէն դադրեցաւ: Ժանօթի դաշնակութիւններն ու պարերը հրճուեցուցին բոլոր ներկաները:

Իշխանը խոստմնազանց չդտնուեցաւ. թէ և ծանր ըլլար իրեն իր աղջիկը մերկ ու բոկոտն մէկու մը տալ: Իր ստորադասներն նախանձելով Ժանօթի բաղդին, կարգ մը դժուարութիւններ յարուցանել թելադ-



րեցին իշխանին, որ ընթրիքէն վերջ Ժանօթը մէկդի կանչելով ըսաւ. « Այս օրէն սկսեալ քեզի փեսաս կը համարիմ, միայն թէ ըրած մէկ ուխտս պէտք է կատարես:

— Ի՞նչ ուխտ, ըսաւ Ժանօթ:

— Հիմայ կը տեսնես, ըսաւ իշխանը:

Այս մօտերը մարդ մը գեղեցիկ ձի մը ունի որ իրեն հառաբակ յատկութիւններէն զատ, օժտուած է ընտիր ձիւքով մը, կը խօսի ինծի ու քեզի պէս, ինչ որ շատ հաճելի է առանձին ճամբորդողի մը համար: Արդ, զաւկիս պատահած դժբաղդութենէն առաջ՝ ես ուխտած էի թէ աղջիկս անոր միայն պիտի տամ որ կարենայ այդ ձին ինծի բերել:

— Այդ է միայն, պատասխանեց Ժանօթ, պէտք եղածը կ'ընենք:

Սենեակ քաշուեցաւ իր երեք միջատներուն խորհուրդ հարցունելու համար. ոսկեջրեակը ըսաւ. « Առ սա մեղամաղձոտ գնտաւը որ բարեկամ մեղուներէն մէկն ինծի տուաւ, այս գնտակը երկու մաս ըրէ, իւրաքանչիւրը ձիուն մէջմէկ ականջները խոթէ: Այս միջոցաւ պիտի յաջողիս ձեռք անցնել »:

Ճպուռն ալ իր կարգին խօսեցաւ :

Ժանօթ՝ մեղրամոմն ու ճպուռը հետն առած՝ դնաց բոլորաթիքը ջրով լեցուն մեծ փոս մը ունեցող դղեակին շուրջը թափառել : Այն տեղ մարդ մը տեսնելով ըսաւ .

« Բարի լոյս , տէր . ի՞նչպէս էք :

— Շատ աղէկ . ի՞նչ կը փնտուես այս տեղերը :

— Գործ կը փնտուեմ :



— Ի՞նչ գիտես ընել :

— Տէր , գիտեմ ձի խնամել :

— Շատ լաւ . ետեւէս եկուր : Ես ալ ձի մը ունիմ եւ քեզի կը վստահիմ :

Երբոր Ժանօթ առանձինն մնաց գոմին մէջ , անմիջապէս մեղրամոմի դնաակը երկուքի բաժնեց եւ իւրաքանչիւրը ձիուն մէջ մէկ ականջը թխեց : Իսկոյն մեղրամոմն սկսաւ ուռիլ , ուռիլ , այնպէս որ ձիուն երկու ականջները բոլորովին խլացուց : Ժանօթ գոյգ մը խթան անցուցած ըլլալով կօշիկներուն՝ ձին հեծաւ եւ արիւնոտելու չափ խթելով գոմէն մինչեւ անտառ քառաորովի վազցուց անիկա :

Երբ Ժանօթ ձին բերաւ աներոջը յանձնեց , ամէնքն ալ զարմացան , բայց քովինները խրատեցին իշխանը որ միջատներուն զաղտնիքը իմանայ . հետեւաբար իշխանը ըսաւ . « Սիրելի Ժանօթս , չնորհակալ եմ քու աշխատութենէդ , բայց վերջին խնդիրք մըն ալ ունիմ , որ ոչ աշխատանք եւ ոչ իսկ փողքիկ տեղափոխութիւն մը պիտի պատճառէ քեզ , գիտէ՞ք թէ՞ Թանգարանիս մէջ միջատներու խիստ գեղեցիկ հաւաքածոյ մը ունիմ , երեք միջատ կը պահուի , կարծեմ դուք այդ երեքն ալ ունիք : Լաւ ուրեմն , ինծի տուէ՛ք զանոնք հաւաքածոյս ամբողջ-

ջացնելու համար :

Ժանօթ անմիջապէս կռահեց աներոջը միտքը , եւ պատասխանեց . « Կրնաք ձեզի վար դնել ձեր աղջիկն ալ , ձեր հարստութիւնն ալ , պէտք չունին ինծի : Գալով սիրելի միջատներուս , որոնց յանձափս երախտապարտ եմ , չէք կրնար զանոնք ձեռքէս առնել : »

Այս խօսքերն ըսելով Ժանօթ դուրս ելլելու վրայ էր , երբ դրան երկու փեղկերն միասին բացուեցան ու երեք գեղեցկադէմ օրիորդներ ներս մտան :

Անոնցմէ մին Ժանօթի դառնալով՝ ըսաւ . « Կեցի՛ք Ժանօթ , ձեր մէկ դիտումը փափաքուած բարեգործութիւնն իրականացնելու բաւական եղաւ : Մենք երեք դիցուհի քոյրեր ենք՝ երեք միջատներու կերպարանքին տակ ծածկուած . մենք դատապարտուած էինք այդ վիճակին մէջ մնալու մինչեւ որ հանդիպէինք այնպիսի վեհանձն մահկանացուի մը , որ մեր շահը իրենինէն վեր դասէ : Դուք ազատեցիք մեզի , ու այժմ ընտրեցէք մեր երեքէն որն որ ուզէք , միւս երկուքը յաւիտեան բարեկամուհի պիտի մընան ձեզի :

Ժանօթ չփոթած պատասխանեց . « Մեծ պատիւ է որ կ'ուզէք ընել ինձ , օրիորդք , բայց որովհետեւ երեքդ ալ գեղեցկութեամբ հաւատար էք , պէտք է ուրիշ կերպով մը որոշեմ : Զեր հրամանաւ պիտի առնեմ ուրեմն այն , որ աւելի երախտապարտ ըրած է զիս : »

Օրիորդներէն մին ծիծաղիլ սկսաւ եւ պատասխանեց . « Ես ոսկոյնորեակն էի : — Ես ճպուռը : — Ես մամուկը : » — Այն ատեն Ժանօթ ազնուութեամբ յառաջացաւ եւ ձեռքէն բռնեց . . . դուշակեցէք թէ՛ որն առաւ :

Թարգմ. ԿԱՐԱՊԵՏ ՏԷՄԻՐԵԱՆ

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԱՅ ՍՍԴԸ

« Այսօր անուանս օրն է , ըսաւ փոքրիկ Յակոբ իր եղբայրներուն ու քոյրերուն , այս իրիկուն խորոված սագ մը պիտի ուտենք : »

Երբ իրիկուն եղաւ , լոյսերը վառեցին , եւ աղայք զուարթօրէն փութացին աեղերնին նստիլ կերակուրի համար պատրաստուած

սեղանին շուրջը, անհամբերութեամբ սպասելով խոստացեալ կերակուրին:

Վերջապէս աղախինը եկաւ, ու կրակին վրայի շամիրուրն անցած սագը դիտելով.

« Դեռ կէս ժամ պէտք է որ, ըսաւ, աշէկ մը եփի: »

Այս խօսքերը երբ իմացան, տղաքը սկսան իրար անցնիլ, Բայց աղախինը իբր թէ վարպետութիւն բանեցնել ուզելով՝ ըսաւ անոնց.

« Հանգիստ կեցի՛ք, վասն զի այսօր սոսկալի տղայակերն փողոցները կը պտտի ու անառակ տղաքը տապալակ դնելով կ'առնէ կը տանի: Եթէ չի լռէք, սագն անոր կուտամ »:

Տղաք առանց անոր ըսածը մտիկ ընելու սկսան աւելի պնդել ու պօռալ որ կերակուրը սեղան բերէ: Աղախինը ճարահատ պատուհանը բացաւ ու շամիրուրը դուրս երկնցնելով ըսաւ.

« Ա՛ռ, տղայակեր, ահա սագը:

— Ծնորհակալ եմ », պատասխանեց հաստ ձայն մը փողոցէն:

Ճիշդ այն պահուն աղքատ մուրացիկ մը կ'անցնէր պատուհանին տակէն, և շամիրուրն ու խորովածն առնելով աներեւութացաւ:

Տղաքները սկսան վախերնուն պօռալ, աղախինն ալ մէկտեղ: Մայրիկը սարժափած անեակը վազեց. երբ պատահածը իմացաւ, ըսաւ. « Ահա ձեր անհամբերութեան արդարացի պատիժը, տղաքս, այսօր խորոված սագի տեղ պարզ բանջարեղէն կերակուր մը պիտի ուտէք: Գալով քեզի, աւելցուց, աղախինին դառնալով, արդէն քանի մը անգամ պատուիրեր եմ որ այդպիսի անհեթեթ բաներ չպատմես տղոց. ուստի քու անմիտ վարպետութիւնդ պատժելու համար, ամսականէդ վար պիտի դնեմ սագին ու շամիրուրին ստակը »:



ԳԼԵ ԳՈՐԾԱԾՈՒԱԾ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆԸ

Յովակիմ Դորրիկ ագարակ մը ունէր, ուր երջանիկ կ'ապրէր աշխատութեամբը: Խնայողութեամբ և դործունէութեամբ, ոչ միայն իրեն պէտք եղածն ունէր, այլ և արուեստարի կը յաջողէր փոքրիկ գումար

մը պահեստի դնել իր դաւաններուն համար:

Օր մը իր բակին մէջի հորը կը մաքրէր, տղմին տակ թաղուած պղինձի աման մը զըտաւ ոսկով ու արծաթով լեցուն: Այս դէպքը հիացուց Յովակիմը, որ կարծեց թէ այս գանձը գտնելով՝ ճշմարիտ երջանկութիւնը գտեր էր:

Ուստի այն օրէն սկսեալ, դաշտին աշխատութիւնները ծառայներուն թողուց, իր վիճակին վայելածէն ծանր զգեստներ հագաւ. համարամ ու սուղ ուտելիքներ սկսաւ ուտել. կը խմէր, կը խաղար. մուցաւ Աստուած և հանդերձեալ կեանքը, մէկ խօսքով անանկ ըրաւ որ, քիչ տոնէնէն փոխանակ բաւիլի հարստանալու, ունեցած դրամն ալ կորսնցունելով պարտքի տակ ինկաւ: Իր հարստութիւնը դէշ դործածելուն մարացկութեան ատիճանին հասեր էր: Իր փոքրիկ ագարակն գրաւեցին և աճուրդի հանելով՝ ծախեցին: Իր անկանոն կեանքը առողջութիւնը փնտրէր էր, և բարոյական վարքի ամենափոքր կայծն իսկ չէր մնացեր սրտին մէջ: Վերջապէս թշուառութենէն, օր մը գնաց այն հորին քով, ուսկից գանձը գտեր էր, և յուսահատութենէն ինքզինքը մէջը նետեց:




ԱՇԽԱՐՀԻՍ ԱՄԷՆԷՆ ՄԵՍ ՄՕՐՈՒԹԸ

Ասկէ տաս տարեկու տարիի չափ առաջ Մօնիխօնի (Պրանտ) մէջ կ'ապրէր Լուի Գուլոն անուն Յ3 տարեկան դործաւոր մը: Ասոր մօրուքը երկուքուկէն մեզր երկայն էր ու Եւրասոյի մէջ ամէնէն մեծը կը համարուէր: Ինքը տասնեակու տարեկան հասակին արդէն ածիւրիլ սկսած էր. երբ քսան տարեկան եղաւ՝ մօրուքը մէկ մեզրի հասաւ, երեսուն տարեկանին ալ գետինը կը քսուէր:

Պատկերը դրուած մարդը, Թէփլէյ, Ամերիկացի մըն է վաթսուն երեք տարեկան: Ասոր մօրուքը 3 մեզր 25 սնդմ. է: Հաշիւը բաժնէն որ երբ Պր. Թէփլէյ հարիւր տարեկան ըլլայ, մօրուքը մինչեւ 6 մեզրի պիտի հասնի:


Խոշոր մօրուք մը ունենալը աղւոր բան է, բայց կը հարցնէք անշուշտ. այդ մարդը ինչպէս կ'աշխատի, ամէն օր ինչպէս կեանք

կը վարէ: Դուռն՝ վիզը կը փաթթէ եզեր իր դանձը. Պր. Թէփլէյ ասուէ տոպրակի մը մէջ կը զնէ եւ կուրծքին վրայ չապիկին



տակ կը պահէ: Օր մը, զուարճութեան համար Նիւ Եօքքի մեծ փողոցներէն մէկուն մէջ մօրուքը դուրս հանեց. զինքը տեսնելու համար խոնուած բազմութիւնը այնքան մեծ եղաւ որ ոստիկանները ստիպուեցան Բողոքուրդը ցրուել:

Օկիւստ Բ. Սաքսի ընտրող իշխանը, ձի մը ունէր, որու բաշը 4 մեդրէն աւելի էր, իսկ պոչը երկու մեդր: Երեւակայեցէք թէ Պ. Թէփլէյ այդ ձիուն վրայ հեծնէ եւ ձիաւոր ու հեծանելի մազերնին ու մօրուքնին հովին ձգեն, ի՞նչ աղւոր տեսարան մը պիտի ըլլայ արդիւնքն:



ԵՐԿՈՒ ԽՆՁՈՐԵՆԻՆԵՐԸ

Հարուստ երկրագործ մը երկու զաւակ ունէր որոնցմէ մին միւռէն տարու մը մեծ էր: Երկրորդին ծննդեան օրը իր միգաստանին մէջ հաւատարմեւութեամբ երկու խնձորենիներ տնկեց, միւսնայն խնամքը տանելով անոնց, որոնք աճեցան միւսնայն հասակով:

Երբ տղայք պարտէզին գործերը վարելու վիճակին հասան, զարնան գեղեցիկ օր մը հայրերնին դանոնք առաջնորդեց իրենց համար տնկուած եւ իրենց անունը կրող ծառերուն քով, ու անոնց գեղեցիկ ճիւղերուն եւ կարմրագոյն ծաղիկներուն վրայ երկարօրէն հիացում առթելէ վերջ. «Կը տեսնէ՞ք, զաւակներս, ըսաւ անոնց, ասոնք կրնան ձեզ օգտակար ըլլալ՝ եթէ լաւ խնամէք զանոնք, եւ կը կորսուին թէ որ անհոգ գտնուիք: Իրենց պտուղներով կրնան ձեզ վարձատրել ձեր աշխատութեան, համեմատ »:

Մեծը, Ստեփան անունով, անխոնջ էր իր աշխատութեան մէջ: Սա ամբողջ օրը կը փորէր մնասկար սրգերուն դէմ իր ծառը պաշտպանելու համար: Անոր ճիւղերուն տակ նեցուկներ կը դնէր՝ վախճալով որ պտուղներուն ծանրութենէն չըլլայ թէ ծռու ուղղութիւն մը առնեն, բոլորովին միշտ կը հերկէր՝ որպէսզի արեւուն տաք ճառագայթները եւ առաւօտեան ցօղին խոնաւութիւնը լաւ թափանձեն արմատներուն: Կարծես թէ մայրը իր փոքր հասակին մէջ այսչափ ուշադրութիւն դարձուցած չէր իրեն՝ որչափ ինք խնձորենիին համար:

Միքայէլ, իր եղբայրը՝ աշխատութեան բոլորովին անտարբեր՝ ամէն օր մօտի դառնիկըր ելլելու կ'դադարէր անցորդներուն քար նետելով, կ'երթար մօտակայ դիւղի տղոց հետ միշտ կը կռուէր ու երբ երեկոյին տուն վերադառնար՝ երեսը եւ սրունքները ձեղքուածներով եւ ճակատը ուռեցքներով լիցուն էին, զորս չտեսած էր կռուած ժամանակ ընդունած հարուածներէն: Մէկ խօսքով իր ծառը աճեցաւ երեսէ ձգեց՝ որ անոր վրան իսկ չխորհեցաւ:

Օր մը, ըստ իր բարի սովորութեան սողին անցին թափառած ատեն Ստեփանին ծառը տեսաւ բեռնաւորուած բազմութիւն կարմրուկ ոսկեգոյն խնձորներով, որոնք կարծես իրենց ծանրութենէն նեցուկներն իսկ պիտի կոտրէին: Այնպիսի առատ հունձքէ մը քաջալերուած, իր խնձորենիին քով վազեց անիկա ու այնչափ բեղմնաւոր տեսնել յուսալով: Բայց ի՞նչ յուսախաբանութիւն, երբ տեսաւ մամուսապատ ճիւղեր եւ քանի մը դեղնած տերեւներ: Նախանձէն եւ զայրոյթէն գրգռուած, հօրը քով վազեց ու ըսաւ.

« Հայր, ինձի համար ի՞նչպիսի ընտրութիւն մը ըրեր էք, ծառս աւելի կոթի մը պէս չոր է, և հիմակ տասը խնձոր իսկ չկայ վըրան, մինչդեռ եղբօրս... ո՛հ, անոր աղւորը կամեցեր էք: Հրամայեցէք իրեն հետ կէս առ կէս բաժնել իր խնձորները:» — « Բեզ հետ բաժնե՞լ, պատասխանեց Հայրը, անկարելի է այդ: որովհետեւ գործունեայ մը իր քրտինքը պարապ տեղը վատնած պիտի ըլլար՝ ծոյլ մը սնուցանելու համար: Նուաստութիւն, ահա՛ չաշխատողին պարգեւը, և մանաւանդ մի՛ մեղադրեր ինձի անարդարութիւն մը ըրածի պէս, տեսնելով եղբօրդ առատ հունձքը: Քու ծառդ ալ անորին չափ ուժով էր և միեւնոյն տեսակէն հաւասար քանակութեամբ ծաղիկներ ունէր, միայն թէ քուկդ անորինին պէս խնամք ու մշակութիւն ընդունած չէ: Ստեփան իր ծառը փնասակար միջատներէ ազատեց, իսկ դուն թողուցիր որ անոնք ոչնչացնեն ծաղիկները: Քանի որ չեմ ուզեր կորսնցունել ինչ որ Աստուած ինձ պարգեւած է՝ այս ծառը քեզմէ պիտի առնեմ՝ անունդ ալ վրայէն ջնջելով: Անիկա պէտք է որ եղբօրդ ձեռքն անցնի իր ոյժը և կորովը վերստանալու համար, ու այս վայրկեանէս սկսեալ ծառը և արտադրելիք պտուղները անոր կը պատկանին: Եթէ ուզես կրնաս երթալ ուրիշ մը դատել իմ տնկանոցէս, քու ծառդ փոխարինելու համար: Բայց թէ որ անտարբեր կենաս, անիկա դարձեալ եղբօրդ կը պատկանի, քանի որ նա կ'օգնէ ինձի աշխատութիւններուս մէջ:»

Միքայէլ զգաց իր հօրը տուած վճռին արդարութիւնը և խրատին խոհականութիւնը: Նոյն վայրկեանէն իսկ գնաց հօրը տնկոցը, ընտրելով ամէնէն լաւագոյններէն մին գոր կը կարծէր: Իր ձեռքով տնկեց, իսկ Ստեփան ալ իր խորհուրդներով անոր օգնեց ծառը մշակած ատեն: Միքայէլ վայրկեան մը իսկ չկորսնցուց, իր ընկերներուն հետ կռուիլը մոռցաւ, որովհետեւ աշխատութեամբ սրտի աւելի ուրախութիւն և հաճոյք կ'զգար: Յաջորդ տարին իր յոյսերը լիուրի վարձատրուած գտաւ, ստանալով երկպատիկ բերք: Մոռցաւ այն յոռի սովորութիւնները՝ որոնց հետ այնքան սերտ կապուած էր: Հայրը, այս բարեփոխումէն

կատարեալապէս գոհ, յաջորդ տարին անոր շնորհեց իր եղբօրը հետ կէս առ կէս փոքր մրգաստանի մը արդիւնքը:

Նիկոմիդիա Թարգմ. Յ. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ



ԲԱՐԵԿԱՄՈՒԹԻՒՆ

Սիրելի՛ որդեակ

Մարդս բնութեամբ սիրող է, ու միշտ սրտին մէջ հակում մը ունի, կարօտութիւն մը կ'զգայ ուրիշի հետ կապուելու: Սրտերնիս չի կրնար անգործ, դատարկ մնալ: Շատ մը ընկերակիցներու, սաստիկ զբաղումներու մէջ գտնուած ատենդ ալ՝ թէ որ հաւատարիմ ու սրտակից բարեկամ չունիս, միշտ սիրտդ դատարկ է, ամէն ատեն, ու ամէն տեղ բարեկամի մը կարօտութիւնը կ'զգաս: Շատ անգամ կը պատահի որ սրբտերնուս մէջ ունեցած դաղտնիքնիս, խորրուրդնիս լերան մը պէս կը ճնշէ, ու երբոր մեր վստահութիւնը գրաւած անկեղծ բարեկամի մը կը յայտնենք վիշտերնիս ու նեղութիւննիս, կարծես աւելի դիւրաւ կը կըրենք զանոնք, և ուրախութիւննիս աւելի կը մեծնայ: Միայն ճշմարիտ է այն բարեկամը որ կրնայ՝ առանց մեզի վշտացնելու պակասութիւննիս մեր աչքին առջեւ դնել: Կարծես թէ անկեղծ բարեկամի է որ մեր նայուածքէն կ'իմանայ մեր կարօտութիւնը ու իրեն յայտնելու ամօթէն մեզի կ'ազատէ: Դժուար կացութեան մէջ գտնուած ու ընկեղծնիս չգիտցած ատեննիս՝ ինք մեր խորհրդատուն կ'ըլլայ. տազնապալի գործի մը մէջ գտնուած ժամանակնիս՝ ինք մեզնէ աւելի կը ջանայ անկէ ազատելու: Խեղճութեան ու աղքատութեան մէջ ինկած ատեննիս՝ թէ՛ քսակն և թէ՛ բերանը բաց է մեզի մխիթարելու և օգնելու համար: Իրարու մօտ եղած ատեննիս կարծես թէ կըրկին կը վայելենք մեր ժամանակին ամէն մէկ վայրկեանն, ու իրմէ հեռի եղած ատեննիս՝ իր յիշատակով կը մխիթարուինք:

Գ Ի Տ Ս Լ Ա Ն Վ Է Պ

Ժ Ի Ի Լ Վ Է Ր Ն

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

ԴԵՊԻ ԵՐԿՐԻՍ ՎԵՐՈՒՆԸ

(Շարունակութիւն 5րդ քիւէն)

— Ստիպուած եմ ընդունելու, յարեցի, որ Սաքնիւսէմի գրածը բացայայտ ու հասկնալի է և թէ յիշատակադիրը իր ձեռքէն ելած է: Այս գիտունը Մնէֆէլսի խորը գացած է, տեսած է որ յուրիսի առջի օրերը Սքարթարիսի շուքը խառնարանին ճիշտ եզերքին վրայ կ'իյնայ, նաեւ իր Ժամանակները պատմուած աւանդութիւններէն իմացած է թէ այդ ճամբան երկրիս կեդրոնը կը տանի: Բայց բնաւ չեմ հաւատար որ ինքը մինչեւ երկրիս կեդրոնը գացեր է այդ խառնարանին մէջէն եւ անկէ ալ ետ դարձեր է:

— Ինչո՞ւ համար չէ, հարցուց հօրեղբայրս ծաղրական շեշտով մը:

— Որովհետեւ գիտութեան բոլոր տեսութիւնները կը մերժեն ասանկ ձեռնարկի մը իրականութիւնը:

— Բոլոր տեսութիւններն ալ ատա՞նկ կ'ըսեն, հարցուց դասախօսը միամիտ կերպով մը: Ա՛խ, այդ տեսութիւնները, քեզի շատ կը նեղեն այդ չար տեսութիւնները:

Կը տեսնէի որ ինծի կը ծաղրէր, սակայն շարունակեցի:

— Այո, եւ ամէն մարդ գիտէ որ երկրիս երեսէն վար ամէն իննսուն ոտք խորութեան՝ տաքութիւնը մէկ աստիճան կ'աւելնայ. արդ այս համեմատութիւնը անփոփոխ պահելով՝ երկրիս կեդրոնը երկու հարիւր հազար աստիճանէն աւելի ջերմութիւն կ'ընէ, քանի որ շառաւիղը հազար հինգ հարիւր փարսախ է: Ոսկին, արծաթը եւ բոլոր մարմինները ասանկ բարձր տաքութեան մը չը դիմանալով՝ հրաշեկ կազի ձեւն առած են հոն: Իրաւունք չունի՞մ ուրեմն հարցնելու թէ ասանկ միջավայրի մը մէջէն երթալը կարելի՞ է բան է:

— Ուրեմն Աքսէ՛լ, քեզի չիտթեցնողը տաքութիւնն է:

— Անչո՛ւշտ, մինակ տասը փարսախ խորութեան մէջ ա՛լ հաստատուն մարմին չը կայ, եւ այդ չափն է երկրագնտիս կեղեւին թանձրութիւնը:

— Կը վախնաս որ դո՞ւն ալ կը հալիս:

— Ձեմ գիտեր, ըսի նեղանալով:

— Իմ գիտցածս սա՛ է, ըսաւ Պ. Լիտէնպրօք, ծանր հով մը առնելով. ո՛չ դուն, ո՛չ ես, մարդ չգիտեր վստահ կերպով թէ երկրիս մէջ ի՞նչ կ'անցնի, որովհետեւ շառաւիղին մէկ տասներկու-հազարերորդը հազիւ ճանչցած ենք դեռ. գիտութիւնը միշտ կը կատարեւագործուի, նոր տեսութիւն մը իրմէ առաջ ընդունած ուրիշ մէկ տեսութիւնը կը ջրէ: Ձե՞ս գիտեր, մինչեւ Ֆուրիէի Ժամանակները անանկ կը կարծէին թէ մոլորակներու միջեւ գտնուած տարածութեան ջերմութիւնը երթալով կը քիչնայ. բայց հիմա ապացուցուած է թէ այդ եթերային միջավայրերու ցրտութիւնը՝ զէրօյէն վար 40-50 աստիճանը չանցնիր: Ինչո՞ւ համար երկրիս ներքին ջերմութիւնը ասանկ չպիտի ըլլայ. ս՞ով կ'ըսէ որ այդ տաքութիւնը մինչեւ որոշ աստիճան մը հասնելէն ետքը ա՛լ անփոփոխ չպիտի մնայ, փոխանակ աւելնալու և քուրերն ու մետաղները հալեցնելու:

Հօրեղբայրս խնդիրը ենթադրութիւններու վրայ կը բռնէր, անանկ որ պատասխան մը չէի կրնար տալ:

— Արդ, ճշմարիտ գիտուններ, ինչպէս Բուառօն, հաստատած են որ եթէ երկրիս կեդրոնը երկու հարիւր հազար աստիճան ջերմութիւն գտնուի հալած մետաղներուն շոգին անանկ ճնշում մը պիտի ունենայ որ երկրիս կեղեւը՝ շոգեշարժ մեքենայի կաթսայի մը պէս պիտի պայթի կտոր կտոր ըլլայ:

— Ասիկա, հօրեղբայր, Բուառօնին կարծիքն է, եւ ոչ ուրիշ բան:

— Աղէ՛կ, բայց ուրիշ շատ նշանաւոր երկրաբաններ ալ այդ կարծիքէն են. ատոնք հաշիւ քրած են որ երկրիս կեդրոնը ո՛չ ջուր կայ, ո՛չ կազ, ո՛չ ալ հալած մարմին, որովհետեւ այն ատեն երկրագնտը երկու անգամ աւելի թեթեւ պիտի կշռէր:

— Թուանշաններով ուղածնիդ կրնաք ապացուցանել:

— Բայց դէպքերուն ի՞նչ կ'ըսես. հրա-

բուհներուն թիւը երթալով քիչցած է, ըսել է կեդրոնական ջերմութիւնն ալ կամաց կամաց իջած լինցած է:

— Հօրեղբայր, երբ ենթադրութիւններու սկսիք, պատասխան մը չեմ կրնար տալ:

— Ես ալ կ'ըսեմ որ ուրիշ շատ մը հմուտ անձեր իմ կարծիքէս են: Կը յիշե՞ս, երբ Տավի անդլիացի նշանաւոր քիմիագէտը ինծի այցելութեան եկաւ, 1825ին էր:

«ո՞վ մը՝ որու գետ գիտութիւնը պատասխան մը տուած չէ:

— Ի՞նչ պատճառով, հարցունցի:

— Որովհետեւ այդ հեղուկ զանգուածը, ովկէանոսին պէս լուսնի՝ ձգողական զօրութեան ազդեցութիւնը պիտի կրէ՝ և օրը երկու անգամ տեղատուութիւններ յառաջ բերելով երկրաշարժի պարբերական ցնցումներու տեղի պիտի տար:



— Ո՛չ, որովհետեւ այդ օրէն տասներինը տարի ետքն է որ ծնայ:

— Աղէկ, Տավի Համպուրկէ անցած միջոցին ինծի այցելութեան եկաւ, Գիտական շատ մը խնդիրներու վրայ վիճաբանելէ յետոյ երկրիս կեդրոնին հեղուկ ըլլալուն կամ չըլլալուն վրայ ալ խօսեցանք: Երկուքս ալ համամիտ էինք թէ հոն հեղուկ վիճակը գոյութիւն չիկրնար ունենալ միակ պատճա-

— Բայց՝ ակներև է որ երկիրս հրաշէկ վիճակ մը ունեցած է և կրնաք ենթադրել թէ կամաց կամաց կեղեւը պաղելով կրակը ղէպի կեդրոնը քաշուած է:

— Սխալ, պատասխանեց հօրեղբայրս, երկիրս տաքցած էր միակ իր մակերեւոյթին այրումովը: Այս մակերեւոյթը կազմուած էր բօթասիւմի, սօսիումի նման մետաղներով՝ որոնք կը բռնկին ջուրի կամ օդի ներ-

կայութեանը. երբ օգին մէջի ջրաշողին խռտացաւ և անձրեւի վիճակին մէջ գետինը ինկաւ, սոյն մետաղները այրիւ սկսան. քսնի ջուրերը դէպի խորերը կը թափանցէին այնքան ներքին խաւերը կ'այրէին ու կը բորբոքէին. ասկէ է որ հրաբուխները յառաջ եկած են:

— Այդ ենթադրութիւնը խելքի մօտ է:

— Տափի ապացուց ատիկա հոս, այս սենեակին մէջ, պարզ փորձով մը: Վերը ըսած մետաղներովս գունտ մը չի նեց և վրան քիչ մը ջուր ցրցնեց. անմիջապէս գունտին մակերեսովը սկսաւ բորբոքիլ, ոքստանալ և պզտիկ լեռ մը կազմել, լեռան գագաթը խառնարան մը ձեւացաւ և մանրանկար հրարուխի մը առտարանը ընծայեց որու բորբոքած միջոցին գունտը անանկ տաքցեր էր որ ձեռք չէր դիմանար:

Շիտակը խօսելով, դատախօսին պատճառաբանութիւնները աւելի համոզումս խախտել սկսան:

— Կը տեսնե՞ս, Ա. քսէլ, երկրաբանները անհամաձայն են կեդրոնական հոլի տեսութեան վրայ, ես չեմ հաւատար ներքին ջերմութեան, և իրաւ ալ գոյութիւն չկընար ունենալ: Սակայն ինչ որ է քիչ ատենէն պիտի տեսնենք, և Այն Սաքնիւսէմի պէս պիտի կարենանք այս հարցին վրայ ապահով բան մը գիտնալ:

— Այո՛, գոչեցի եռանգով մը, այո՛, պիտի տեսնենք՝ եթէ հոն բան մը տեսնելու չափ լոյս կ'ընէ:

— Ինչո՞ւ չէ. ելեք տրականութիւնը կըրնայ մեզի լուսաւորել, նոյն իսկ մթնոլորտն ալ որու երկրիս կեդրոնին մօտ ունեցած ահագին ճնշումը օդը փայլուն կը ցուցնէ:

— Այո՛, ըսի, վերջապէս անկարելի բան մը չէ:

— Ասիկա ապահով է, պատասխանեց հօրեղբայրս յաղթական, բայց լուռ կեցիր, մէկը պէտք չէ որ խմանայ և մենէ առաջ երկրիս կեդրոնը երթալու գաղափարը ունենայ:

Թարգմ.

ՋԱՐԵՇ Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ



ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹԵԱՆ

Գ. Լ. ՈՒՆ Ա.

Յ Ո Յ Ն Ե Ր Ը

ՍՊԱՐՏԱ, ԼԻԳՈՒՐԿՈՍ

(Շարունցիկութիւն 4-րդ րիւկէն)

Ասկէ դատ՝ անոնք ունէին իրենց առաջնորդ գլխաւոր եւ առաքինի քաղաքացիներէն մին որ իւրաքանչիւր խումբին սկետ կը կարգէր տղայոց մէջէն ամէնէ իմաստունը և ամէնէ կտրիճը, որ կը կոչուէր Իրեմոս: Այս անունը կուտային այն տղայոց որոնք պատանեկութեան հասակը փոխած էին երկու տարիէ ի վեր, և Միլիիւրեմոս անունը կուտային տղայոց ամէնէ աւելի տարիքոտին:

Այս Իրէնսը՝ քսն տարեկան՝ իր գունդին հրամանատարութեան պաշտօնը կը վարէր պատերազմներուն մէջ, և խաղաղութեան ատեն զանոնք իրեն ծառայ կը գործածէր ապուրը եփել տալու համար: Կը հրամայէր ամէնէ ուժեղներուն որ երթան փայտ ճարեն բերեն. ամէնէ փոքրերը կը բերէին բանջարեղէններ զոր գաղտուկ մը մարդ չի տեսած կը գողնային կամ պարտեղներէն կամ հասարակաց սեղաններէն և շուտ մը կը փախչէին այնքան զգուշութեամբ որ քսան ճարպիկութեամբ: Եթէ բռնուէին սաստիկ կերպով կը խորապանէին զանոնք՝ անփոյթ կամ անճարակ գտնուելուն համար: Նոյնպէս կը խլէին ինչ որ կարենային գտնել միս եւ այլն. Մայր աստիճան ճարպիկ էին առիթը ձգելուն մէջ, երբ կը տեսնէին մէկը որ կը քնանայ կամ կը պահպանէ անփոյթ կերպով: Սովորաբար թեթեւ ճաշ մը կ'ընէին, որպէս զի իրենց պէտքերն ինքնիրենցմէ հոգալու ստիպուած՝ հարկաւորապէս ըլլային աւելի խորամանկ եւ աւելի յանդուգն գտնուելու:

Այս պատճառաւ էր որ մանաւանդ անոնց քիչ կը կերցնէին. ասկէ դատ անոնց՝ հասակը աւելի աճեցնելու ալ ուրիշ

պատճառ մըն էր. որովհետեւ մարմինը կ'ա-
ծի եւ բարձրութիւն կ'առնու երբ կենդա-
նական ոյժերը չի գտնեն այն որոճալիք
միտերը որոց ծանրութիւնը իրենք իրեն
գերի կ'ընէ ու կը ճնշէ, կամ զա-
նոնք դէպի լայնքն աւելի տարածելու պատ-
ճառ կ'ըլլայ: Այն ատեն անոնք կա՛ճին կը
բարձրանան իրենց թեթեւութեան պատ-
ճառաւ եւ մարմինն աւելի վեր կը խոյա-
նայ: Ասի օգտակար է նաեւ գեղեցկութեան:
Բարակ ու նրբաւարտ մարմինն աւելի լաւ
կը հնազանդի բնութեան որ կը ձգտի ա-
նոնց տալ գեղեցիկ բարեձեւութիւն մը,
ընդհակառակն այն մարմիններ որոց չափա-
զանց գիրութիւն կուտայ չափէ աւելի սը-
նունդ մը, բնութեան կը դիմադրեն իրենց
թանձր ծանրութեամբ: Վերջապէս՝ այս տը-
ղաքներ երբ գողութիւն կ'ընէին, այնքան
չատ կը վախնային իրենց բռնուելով ձեռք
իյնալէն որ՝ անոնցմէ մին, որպէս կը պատ-
մեն, աղուէսի ձագ մը գողցած ըլլալով զայն
պահած էր իր հագուստին տակ, թողուց որ
անասունը իր ճանկերով ու ակաւներով
պատուտէ իր փորը առանց ճիչ մը հանելու,
եւ լաւ համարեց մեռնիլ քան յայտնուիլ:
Այս իրողութիւն անհաւատալի չէ, երբ դեռ
կը տեսնուին Սպարտացի տղաքներ որ ցու-
պերու հարուածներուն տակ կը մեռնին Տի-
անա Օրթիաի բազինին վրայ:

Ճաշերին աւարտելէն յետոյ՝ իրէնը տա-
կաին սեղանին վրայ, կը հրամայէր տը-
ղաքներէն միոյն երգել, ուրիշ մէկու մը
կ'առաջարկէր խնդիր մը՝ որուն պատասխա-
նը խորհրդածութիւն ու դատողութիւն կը
պահանջէ. օրինակի համար, ո՞վ էր քաղա-
քին ամէնէն աւելի բարիք կամեցող մարդը.
ի՞նչ էր այս կամ այն գործոյն նկատմամբ
իր մտածումը: Ասով զանոնք կը վարժեցը-
նէր, մանկական հասակէն սկսեալ՝ դատել
համեստ գործերը, խնամօք տեղեկանալ
քաղաքացւոց բարքերուն, տղան՝ որու հար-
ցուած էր թէ ո՞րն է ամենալաւ կամ ամե-
վատթար քաղաքացին, եթէ աստամէր
կամ կմկմար պատասխաններուն մէջ, իր շը-
փոթումը կը նկատուէր վատ բնաւորութիւն
մը, եւ թէ պատուոյ զգացումը զինք չէր
գրգռէր դէպ առաքինութիւն: Պատասխանը
տալու էր շուտով. թէ՛ գորաւոր փաստեր
կամ ապացոյցներ ի միասին եւ թէ՛ քիչ

բառերու մէջ սեղմուած: Անխնամ եւ մթին
կերպով պատասխանողը կը պատժուէր Ի-
րէնէն (իր դասապետէն), որ անոր բութ-
մատը կը խածներ: Յաճախ այս պա-
տիժներն անոնց կը տրուէին ծերերուն ու
պաշտօնատարաց առջեւ, որպէսզի հասկնան
թէ դասապետը զանոնք ըստ պատշաճի եւ
արդարութեամբ կը պատժէ. երբէք չէին
արգելուր երբ զանոնք կը պատժէր. բայց
տղաքները քաշուելէ յետոյ դասապետն ինք
կը պատժուէր եթէ պատիժին մէջ խստու-
թիւն կամ ներողութիւն բանեցնէր: Այն ե-
րիտասարդները որոնք այս տղայոց հետ
կցորդուած էին՝ մասնակից կ'ըլլային անոնց
բարի կամ չար համբաւին. կը պատմեն թէ
երկու տղաքներ կուռած ժամանակին՝ մին
բերնէն ցաւի ճիչ մը փախցուց. ասիկա վա-
տութեան նշան էր, որով պոռաքողին քովի
ընկերը տուգանքի դատապարտուեցաւ:

Կը վարժեցնէին տղաքը վայելչութեամբ
համեմուած կծու խօսակցութեան մը եւ
կտրուկ ու սեղմ պատասխաններու:

Ոչ նուազ կը կրթէին զանոնք ոտանա-
ւորներ ու երգեր յօրինելու որքան շնորհքով
ու մաքուր խօսելու. անոնց բանաստեղծու-
թեան մէջ կար տեսակ մը խթան որ անոնց
քաջագործութիւնը կը գրգռէր եւ սխրա-
գործութեան կը մղէր: Անոնց ոճը պարզ եւ
առնական էր, նիւթերը լուրջ, ծանր եւ
բարձրը շինելու յատուկ. իրենց քերթ-
ուածներէն շատը ներբողն էր անոնց որոնք
հասարակաց բարւոյն եւ իրենց հայրենի
տան թեւարկու հանդիսանալով մեռած էին.
երբեմն ալ քննադական պարսաւն էր անոնց
որոնք վեհերոտութիւն ցոյց տուած էին
տաքնապի շտապին մէջ, եւ որոց կեանքը
տխուր եւ դժբախտ կը նկարագրէին ցայտուն
ոճով մը. շատ անգամ ալ բանաստեղծին
տարիքին պատշաճութեան համեմատ, կամ
օր մը առաքինի ըլլալու խոստում մը կամ
արդէն այդպիսի առաքինի մէկը ըլլալուն
փառաւոր մէկ ապացոյցը: Պատերազմէն ա-
ռաջ իրենց թագաւորը Մուսաներուն զոհ
կը մատուցանէր՝ զինուորներուն յիշեցնելու
համար իրենց առած կրթութիւնը եւ զգա-
ցնելու թէ՛ այդ Մուսաներու անունով դա-
տաստան մը պիտի ըլլայ իրենց բռնելիք
վարմունքին վրայ:

Ծան, — Ընթերցողք ներեցին անշուշտ

սոյն միջանկեալ յիշատակութեան որ թէև երկար, բայց Լիկուրգոսի դաստիարակութեան դրութիւնը այնպէս ազդեցութիւն մը ներգործեց յոյն մանկավարժներուն վրայ, որ պարտք համարեցինք արտատպել հոս այն վերլուծումը զոր Պլուտարքոս ըրած է: Եւ ոչ միայն հին Յունաց այլ Եւրոպայի նշանաւոր կրթախօս իմաստասիրաց վրայ, ինչպէս Ռուսօ և ուրիշ շատեր ներշնչուած են Լիկուրգոսի սոյն դրութենէն գրած են իրենց դաստիարակութեան գործերը:



ՓՈՒՅՐԻԿ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՍԿԻՋՐԷՆ ՄԻՆՁԵՒ ՄԵՐ ՕՐԵՐ

ՀԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԳԼՈՒԽ Գ.

ՀՆԴԿԱՍՏԱՆ

(Շար. Յրդ քիւհն)

Սաքիամունին կրցաւ շարունակել իսազաղութեամբ ութսուն տարի իր առաքելական պաշտօնը, յարգելով երկրին մէջ հաստատուած կրօնական, քաղաքական և ընկերական բոլոր վաղուց կազմակերպեալ կարգերը և ուսուցանելով թէ պէտք է իրենց իշխաններու վայել պարտ ու պատկան յարգանքներն ու մեծարանքները ընծայել: Երբ մեռաւ, աշակերտները հաւաքեցին անոր վարդապետած խօսքերը ու քարոզած բոլոր ճշմարտութիւնները, և գումարեցին առաջին պուտոյական համաժողովը. հոն վճռական կերպով հաստատեցին կրօնական այն ծէսերն ու դաւանութիւնները որոնք ճշդուած, սահմանուած են ուրիշ երկու նմանօրինակ համագումար ժողովներու մէջ, որոց մին Քրիստոսէ 500 տարի և միւսը՝ 650 տարի առաջ գումարուած են:

Պուտոյական կրօնքին մէջ՝ ծիսական արարողութիւնը չափազանց պարզ է: Տաճարին մէջ կը դրուի Սաքիամունիի կամ Պուտոյի պատկերը եւ ժողովուրդը կը պատուէ զինքը իբրեւ ամէնէն աւելի ի-

մաստուն մարդն աշխարհին մէջ, ո՛չ նուիրատուութիւններ, ո՛չ աւելորդապաշտական սովորութիւններ ունի, իր կրօնական վարդապետութիւնը կը պարունակէր վերածրթեանց արանդական դաւանութիւնը: Հոգիներու մեռնելէն յետոյ նորէն աշխարհի վերադառնալը, երկրի վրայ թշուառութեան և յուսահատութեան շրջանը նորէն վերսկսելու նշանակութիւնն ունէր հասարակ ժողովուրդին համար. բայց կ'ընծայէր ամէն մարդու սոյն մեղքերէն՝ ո՛չ թէ աստուածներու միջնորդութիւնն՝ այլ նոյն իսկ իւրաքանչիւր մարդու իր անձին յատուկ բարեգործական արժանեաց համեմատ, զերծանելու միջոցը:

Արեւմտեան կրօնքներուն մէջ, մարդկային անձնաւորութիւնը՝ կենդանութեան ատեն նախախնամութեան բացարձակ կամքին հպատակ, մեռնելէն վերջ՝ յաւիտեան կանապէս կը պահուի մարմնոյն յարութիւն առնելով իսկ: Արեւելքի համաստուածեան կրօնքներուն մէջ, ընդհակառակն, բոլոր էակները համագոյակից լինելով վերջապէս բացարձակ էակին ծոցին մէջ կ'ընկղուղին, կը կորուսին: Քրիստոնեան, Հրէան կը յուսան մեռնելէն յետոյ ապրիլ կամ կեանքը շարունակել եւ տեսնել զԱստուած դէմ յանդիման: Հնդիկը կը դաւանի կորոնցել իր անհատական ամբողջ գոյութիւնը, ինքն ալ աստուած լինելու պայմանաւ, լինելով աստուածութեան մի մասնիկը:

Եթէ Հնդկաստան քիչ գործեց, շատ խորհեցաւ, եւ հոյակապ յիշատակարաններով ծածկուեցաւ որուն շքեղ ու խիզախ ճարտարապետական ոճը մեզ կը հմայէ ու կը հիացնէ: Ունեցաւ նա ուրեմն Յունաստանի երեք փառքերը, մտածումը, բանաստեղծութիւնը եւ արուեստը: Հնդկաստան ալ Հելլադաի նման ունեցաւ իրմէ դուրսն աւելի ճառագայթացում, բայց նուազ խիտ, նուազ զուտ, վասն զի եղած է փրիսոփայական ու կրօնական գաղափարաց մեծ աւազանը, ուրիշ անոնք այլ և այլ ուղղութեամբ ծաւալեցան այլ եւ այլ կողմեր: Եւ տակաւին կարելի չէ հաստատել կերպով ըսել նաեւ թէ Հնդկաստան՝ որ այսքան գաղափարաց եւ կրօնական հաւատալեաց թատրոն հանդիսացաւ, իր խորին հմտութեանց արձագանգն ունեցած չըլլայ, ինդոսի եզերքներուն վը-

րայ Յունաց երկնալէն քիչ ժամանակ առաջ եւ մինչեւ իսկ Աղեքսանդրիոյ մէջ՝ ուր Պտղոմեանք ազգերու սրբազան մատեանները թարգմանել կուտային : Յունական իմաստասէրք որ Հնդկաց իմաստասէրներէն շատ վերջը կուգան, յայտնի է թէ ո՛չ միայն Եգիպտոսէն այլ եւ Հնդկաստանէն ալ փոխ առած են շատ մը դաղափարներ, Աղեքսանդրի արշաւանքէն առաջ, որպէս կը ցուցնէ մարդկային մտքի պատմական ընթացքը :


Գ Լ Ո Ւ Թ Դ .

Ե Գ Ի Պ Տ Ո Ս

Առաջին բնակիչները եւ իշխանական Հարսուսթիւնները . — Հնութեան յոյն պատմահայրն Հերոդոտոս ըսած է թէ՝ «Եգիպտոս Նեղոսի պարգեւն է » : Եւ արդարեւ առանց այն պարբերական յորդումներուն, որով Նեղոս գետը կ'ուռնէ եւ կ'արգասաւորէ երկիրը, անապատն իր ան'ըդի ու անբերրի աւազներով պիտի ծածկէր ամէն ինչ որ ջուրերուն տակ չընար : Այս երկրին նախկին բնակիչները՝ որոնք հիւսիսէն եկած եւ Սուէզի (*) պարանոցէն անցնելով եկած հոն հաստատուած էին, կը վերաբերին մարդոց այն ցեղին զոր Աստուածաշունչի Ծննդոց գիրքը Քամեանք կը յորջորջէ անոնց նախահայր Քամայ անունով : Արաբացիք կը կոչեն զանոնք Կարմիրները, անոնց գոյնին պատճառաւ : Հաստատուելին մանր մուկը նահանգապետութիւններ, որոնք երկար դարեր յարատեւեցին իրենց գոյութիւնը : Պատմական այս անձանք չորջանին նկատմամբ զաղափար մը կազմելու համար, կ'ըսուի թէ նախ աստուածները տիրապետեցին . յետոյ կիսաստուածները, այսինքն քոկրմերը, եւ ասոնց ձեռքէն ալ ուր ուրեմն գինուորական դասակարգը խըլեց իշխանական տիրապետութիւնը՝ իրեն իշխանապետ ընտրելով Մէնէսը, որ միացուց իր միապետութեան տակ բոլոր մանր մուկը նահանգապետութիւնները գրեթէ

(*) Հեն ատեն Արսէնօէ կը կոչուէր, իսկ այժմ Սուէզի ջրանցք :

Քս.է 5000 տարի առաջ : Պատմական շատ քիչ ծանօթութիւն կը յիշատակուի այն երեք առաջին նահանգապետութեանց նկատմամբ որոնց իշխանութիւնը ութ դարու չափ



Եգիպտական կոթող

կը տարածուէր Սինա լեռան թերակղզոյն մէջ : Չորրորդ իշխանապետութեան օրով (4200 տարի Քս.է առաջ) քաղաքակրթութիւնն ու արուեստը կը հասնին իրենց բարձրութեան այն աստիճանին զոր հազիւ պիտի




Սֆինքս

գերազանցեն ամենափայլուն թուականներ : Պատմական այս շրջանին մէջ է որ կը կառուցուին հոյակապ շքեղութեամբ կուսէհի մեծամեծ Բուրգերը, Սփինքսները, Եգիպտացի Բիդիաս մը կը քանդակագործէ Քէր-լէմի հիակերտ արձանը, և այս ատենն է որ կը կազմակերպուի միապետական այն մեծ դասակարգը, որ իր կանգնած տաճարներուն և գերեզմաններուն ճարտարարուեստ

նկարչութեանց և անոնց վրայ քանդակերպ արձանագրութեանց մէջ ցոյց կուտան մեզ կորովի երկտառարութեան մը ծածկումը: Այս թուականէն ի վեր է որ Եղիպտոս ունեցած է ինչ որ կը պատկանի իրեն սեպհական արուեստի և դիտութեանց վերաբերեալ պատմական նշանաւոր յիշատակարաններ:

Չորրորդ իշխանապետութեան ամէնէն



Եղիպտոսի բուրգերը

աւելի հաշակաւոր անձնաւորութիւններն են Ապագու աշխարհակալ և Նիկրոտիս թագուհին, « Վարդ աշտերով Գեղեցիկուհին »:

Վեցերորդէն մինչեւ մեծապատերազմ իշխանապետութեան պատմութիւնը համար լուսութիւն կը պահէ, բայց մեծամեծ աղէտներ պատահած ըլլալու են երկրին սրբի վորութիւնը վերստին դաւա երկտառարութեան իշխանապետութեան շրջանի թագաւորաց օրով միայն, ասոնցմէ մին Մորիսի լիճը պեղեց Նեղոսի ձախ եզերքին յորդումները կանաւորելու համար:

(Շարունակելի)



ԹՈՉՈՒՆՆԵՐՈՒՆ ՄԱՅՐԵՆԻ ՍԷՐԸ

Թաշուններու աշխարհին մէջ կը տեսնենք ամէնէն աւելի մայրական սիրոյ գեղեցկագոյն օրինակներն: Այդ մայրենի սէրն անաղարտ մնացած է թաշուններուն քով: Անձնասիրութիւնն, վատ զգացումներ երբէ՛ք զայն չեն ապականած: Թաշունը ա՛րբեղու համար միայն կ'ապրի, իր փետուր-

տուրներուն շաղույցից փայլն, իր քաղցրահնչիւն երգերն, իր ճարտարագիտական տաղանդն, իր շնորհալի թռիչն սիրոյ պարգեւներ են:

Գիտե՞ք, ինչո՞ւ ամէնէն աւելի զօրաւոր է մայրենի սէրը թաշուններու քով, որովհետեւ մայրը միայն կ'ընտրէ բոյնին տեղը և հաւաքելով անոր նախնական նիւթերը, կը շինէ այն բոյները այլապէս ձեւերով և ճաշակով, որոնք մարդկային ակնարկներն և հոգին խի կը հմայեն: Մայրենի սէրն է որ կը ներշնչէ թռչնիկին հիւսելու, մանկու հրաշալիքները, և կ'ընէ զանի կենդանիներու մէջ ամէնէն գեղեցիկ աքունետագէտներէն մէկը: Թաշուններուն համար, բոյնը՝ ո՛չ միայն շքեղ օրօրոց մըն է, ուր կը խնամուին իր ձագերն, այլ նաեւ արուեստագիտական գործ մը՝ որ շինուած է սրտով, հոգեով և սիրով թռչնայն: Թաշունը ի՛նչ աշխուժով, կորովով կը կազմէ իր բոյնը: Այն հոգն, այն զգացումն մայրենի սէրն է: Սիրել, ձագերուն կեանքը պահպանել, անոնց համար պատրաստել անտառին խընկալոյր ծառերուն, լուսութեան և հովանիին մէջ: ազդամաղէ և մամուլներէ շինուած կախով բոյն մը, լսել անոնց առաջին ճիչն, դաժանել անոնց նախնական պէտքերն և մայրենի խնամքով թուխո նստիլ, ահա՛ այն տպաւորութիւններն՝ կ'զգայ թռչունը՝ երբ սխի իր բոյնին շինութեան: Եւ սակայն թռչնիկը՝ իր բոյնը շինելու համար, ո՛չ միջատին խայթոցներն, ո՛չ սկիւռին ձեռքը, և ո՛չ խի կուղբին ակաւն ունի: Իր թաթն ու կառնն հզօր գործիքներ են, որոնց միջոցաւ կը հիւսէ իր բոյնը:

Բոյններուն գիրքը կը զանազանի ըստ տեղւոյն, ծառերու գաղաթին վրայ, մայրաւներու կամ արմատներու մէջ, անապատին կիզիչ աւազին մէջ, ծառերու, ժայռերու և հին ու փլատակ որմերու ճեղքին մէջ, ջուրերու մակերեսին վրայ, և կամ ստերէն վար կախուած օրօրանի նման:


Նիւթերու զանազանութիւնն ևս կարեւոր խնդիրներէն մին է: Երբ ձագերն անփետուր պիտի ծնին, անոնց մայրը « Մայր թռչուն » կը պատրաստէ շատ կախով և տաք բոյն մը, սովորաբար բազկացած երկու կամ երեք խաւ տարբեր նիւթերէ, որոնք հաստատ հիմերու վրայ կը դնեն բոյ-

ներ: Ներքին խաւը կակուղ նիւթերէ կազմուած է: Մեծ մասամբ թռչուններու բոյները այս եղանակով շինուած են: Թռչուններու աշխարհին մէջ, էգը միայն կ'ընտրէ բոյնին տեղը, և այս ընտրութիւնը միշտ հիանալի գիշտութիւնով ի գործ կը դրուի: Հողմերու սովորական ուղղութիւնը կ'ուսումնասիրէ, և այս զգուշութիւնը տեսնուած է բազմաթիւ կղզիներու մէջ, մանաւանդ Ֆեռօհ կղզիներու մէջ՝ ուր ո՛չ մէկ ծրվային թռչուններու բոյն արեւելակողմը շինուած է, որովհետեւ այդ կղզիին արեւելակողմը սաստիկ հովերու և փոթորիկներու ենթակայ է:

յօժար կամքով, զանազան բոյներէ կը հաւաքուին, օտարականներ իրարու բարեկամ կ'ըլլան. մէկմէկու աջակցելով՝ կ'ընտրեն ծառի մը հաստ կոճղն և ճիւղն, որոյ շուրջը հովանոցի մը ձևով ընդարձակ բոյն մը կը շինեն, որուն ներքեւ կը բնակին, իրենց հակիթները կ'ածեն, ընկերութեամբ թուխս կը նստին: Ընդհանրապէս այս տեսակ բոյներ շինող թռչունները ճնճղուկներն են, որոնք իրարու հետ միշտ հաշտարար կեանք մը կ'անցնեն և խաղաղութեամբ կ'ապրին:

Թարգմ.

ՋԱՐԵՀ Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ



ճնճղուկներու բոյն մը՝ ծառի կոճղի մը վրայ շինուած

Գալով բոյնի մը զանազան ձևերու, մայրական սիրոյ մէկ գեղեցիկ հեռատեսութեան ապացոյցն է այս. այն բոյներն որոնք երկնցած ձև մը ունին և որոնց դռնակը վարի կողմը շինուած է, կը վերաբերին այնպիսի թռչուններու՝ որոնք հասարակածի երկիրներուն մէջ կը բնակին. այս կերպով կը շինեն իրենց բոյներն, որպէս զի կապիկներէ և ամէն տեսակ փառասկար սողուններէ զերծ պահեն իրենց ծագերն: Մայրենի սիրոյ զօրութեամբ ամէն թռչուն կ'ըլլայ որմնագիր, դերձակ, ճարտարապետ, կողովագործ, ուտայնակ և հանքագործ: Բոյնի մը վրայ կը տեսնենք այս արուեստներուն իւրաքանչիւրէն նմոյշներ: Կան թռչուններ՝ որոնք կը միաբանին սիրով և

ԳԻՏԱԿԱՆ ՋՈՒԱՐՃԱՆԻՔ

Լ Ա Ր Ա Խ Ա Ղ Ա Յ Շ Ի Շ Ը


Շիշ մը դերձանի մը վրայ կեցնել տալը դժուար կ'երեւայ, բայց քիչ մը աշխատութիւնով կարելի է յաջողիլ: Դերձանը առաջուրնէ կաւիճով չփեցէք, յետոյ երկու ծայրերէն օրօրոցի պէս կախեցէք, շիշին բերնին հովանոց մը անցուցէք պատկերին ցուցածին պէս, եւ քիչ մը խարխալելով թեւին վրայ կեցնել տուէք. կրնայ շիշը քիչ մը օրօրուիլ, բայց վար չիյնար, ինչու որ հովանոցէն թեթեւ ըլլալով՝ երկու առարկաներու միացած ծանրութեան կեդրոնը

դերձանէն վար կը գտնուի, առաջուրնէ քըս-
ուած կաւիճն ալ չի թողուր որ շիշն սա-
հի: Եթէ հովանոցը չանցնէք, շիշին ծան-
րութեան կեդրոնը դերձանէն վեր քնարով
ամենափոքր շարժումի մը շիշը վար պիտի
գլորի:

Սոյն փորձը կրնաք աւելի հետաքրքրա-
շարժ ընել. պարապ շիշի մը տեղ գինիով
լեցունը դնել, ինչպէս կը ցուցնէ աջ կողմի
պատկերը, հովանոցին տեղ ալ դրուած է
շերեփ մը որու խողովին մէջ գաւաթ մը
հաստատուած է. եթէ այս գաւաթին մէջ
ջուր լեցնէք, շիշը կը ծռի եւ գինին կը
վազէ:

12. — ՀԱՆԵԼՈՒԿ

Կենդանիէ մը կը ծնիմ,
Բայց կեանք չունիմ.
Ո՛ւր որ փափաքիմ կ'երթամ,
Բայց ոտք չունիմ:
Ամէն ըսածնին կ'իմանամ,
Բայց հոգի չունիմ.
Որու հետ ուզեմ կը խօսիմ,
Բայց ձայն չունիմ.
Ամէն հարցման պատասխանեմ,
Բայց լեզու չունիմ:
Ուրեմն գիտցի՛ր, թէ ի՞նչ եմ:



ԼՈՒԹԿԻՆԵՐՈՒ ԽԱՂԸ

Առէք ապուրի մեծ պնակ (քեասէ) մը
ջուր եւ վրան զգուշութեամբ լուցկիներ դը-
րէք չրջանակի ձեւով, կառքի մը անիւին
շառաւիղներուն պէս, անանկ որ ֆոսֆոր
քսուած ծայրերը դէպի կեդրոնը նային, իսկ
փայտերը դէպի ամանին եզերքը ուղղուած:
Երբ լուցկիները իրարու մօտեցած են՝ ա-
մանին կեդրոնը ածառի կտորով մը ջուրին
դպէք, անմիջապէս լուցկիները իրարմէ հե-
ռանալով ամանին եզերքները պիտի եր-
թան: Ածառին տեղ եթէ չաքարի կտոր մը
դնէք ամանին կեդրոնը, լուցկիները շուտ
մը հոն պիտի հաւաքուին, ֆոսֆոր քսուած
ծայրերը չաքարին դպչելով, իսկ փայտէ
ծայրերը դուրս մնացած դիրքով:

ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

13. — Ինչո՞ւ համար մետաղեայ պաղ
դգալ մը եթէ խոթենք եռացող ջուրի մէջ՝
վայրկեան մը կը դադրի անոր եռացումն,
իսկ փայտէ դգալ մը նոյն բանը չի պատ-
ճառէր:

14. — Կերպասներն ու բրդեղէններն
ինչո՞ւ համար ամենեւին ցօղով չեն ծած-
կուի՞ր՝ երբ բայց օդի մէջ դրուին:

15. — Պողպատին կտորը կայծքարին
զարնելով ինչո՞ւ կայծ կ'ելլայ:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ կը հրատարակուի ամեն ամսոյ 1ին, 10ին եւ 20ին					
4. ՊՈԼՍՈՅ ՀԱՄԱՐ		ՀԱՍՍՅԷ		ԴԱՆԱՌՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ	
Տարեկանը	40 դահեկան	ՆՇԱՆ 4. ՊԷՐՊԷՐԵԱՆ		Տարեկանը	45 դահեկան
Վեցամսեան	20 »			Վեցամսեան	25 »
Եռամսեան	10 »	Կ. ՊՈԼՍ		Եռամսեան	12 1/2 »
ՌՈՒՎԻՈՅ ՀԱՄԱՐ		ԷՍԿԻ ԶԱՊԹԻԷ ՀԱՏՏԷՍԻ		ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ	
Տարեկանը	8 բուպի	ԹԻԼ 61		Տարեկանը	10 ծրանք

Ձեռնիկ կը ծախուի հաւաք 40 փարայ

16. ՀԱՆԵԼՈՒԿ

Ինքն է սոսկ պզտիկ օձի մը նման,
Ունի աչեր, գլխուն. ուղբին վրան.
Երկննալով աչերն ապա ծառանան
Կարճնալով աչերն կուրանան:

ԼՈՒԾՈՒՄ ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐՈՒ

6. ԱՂ. — ԵՂ.

8. ԹՈՒԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՆԵԼՈՒԿ

9	16	17	32	33	48	49	61
63	50	47	34	31	18	15	22
8	9	24	25	40	41	56	57
58	55	42	39	26	23	10	7
62	51	45	35	30	19	14	3
4	13	20	29	35	45	52	61
59	54	43	38	27	22	11	6
5	12	21	28	37	44	53	60

1. Կարապետ Յ. Խոմէրեան, և 2. Արշակ Պօտիկեան (աշակերտք Կեղը. Վրժի) — 3. Թովհանէս Ս. Պօղոսեան (աշակերտ Պէգճեան Մայր վրժի) — 4. Մաղկաքաղ Յերեմեայի Նիկոմիդիա, (նախորդ տետրին մէջ սխալմամբ Հասկախալ տպուած էր):

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ

Սմաւիա, Հ. Խ. — Ստացանք թղթատարական քարդերնիդ. նմոյշները թերթին հետ զրկուեցաւ. Զերցոյցած հասցէներուն զրկուեցաւ. Զատ թերթ չկայ, կը դառնաւին 1884, 1887, 1888 տարիները:

Կեսարիա, Պալա-Կէսի. Պ. Ն. Տ. — Ղըրկուեցան 1-6 թիւերը, բաժնեգիրնը կրնաք մանտա-բոսդով մեզի զրկել:

Մարաշ, Ն. ԲՀ. Շ. — Ստացանք քարդերնիդ. շնորհակալութիւն ձեր ջանասիրութեան համար. 1-6 թիւերը զրկուած են:

Աֆիոն Գարահիսար, Ա. Յ. Պ. — Ստացանք 28 նոյ. նամակնիդ, զրկուեցաւ 1-6 թիւերը. շնորհակալութիւն ձեր ջանիցը,

Մաղնիսա, Մ. Դ. — Ստացանք. շնորհակալութիւն:

Ասանա, Յ. Տ. Պ. — Ստացանք քարդերնիդ. սխալմունքը կը շտկուի. նոր բաժանորդին համար զրկուեցաւ 1-6 թիւերը:

Հալեպ, Ս. Ա. — Ստացանք նամակնիդ. շնորհակալութիւն ձեր շնորհաւորութեան եւ ջանիցը համար:



ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ ԳՈՐԾԱԿԱԼՔ

Ամասիա, Հայկազուն Էֆ. Խանդամուր
Ասանա, Յակոբ Էֆ. Պօղոսեան
Աստիազար, Ստեփան Էֆ. Սաիրիչեան
Զմիւռնիա, Կարապետ Էֆ. Մալէճանեան
Էրզրում, Տիգրան Էֆ. Բրուտեան
Հալեպ, Ս. Էֆ. Ամատեան
Հիւսիսիկ, Կ. Էֆ. Մ. Յովսէփեան
Մալաթիա, Գրիգոր Էֆ. Թաճեան
Մարաշ, Սրբ. Տ. Նէրսէս ԲՀ. Շահինեան
Մարզուան, Ա. Էֆ. Կ. Կիւլպէնեան
Նիկոմիդիա, Յակոբ Էֆ. Տ. Ազարեան
Սրվազ, Միհրան Էֆ. Իսպիրեան
Սիւմհանի Ուոյ Ա. Էֆ. Կ. Կիւլպէնեան
Վեզիր (Kopri) » » » »
Տիւրքիլի, Լեւոն Էֆ. Սրապեան

ԱՐՏՈՆԱՏԷՐ — ԽՄԲԱԳԱՊԵՏ

ԱՐՄԷՆ ԼՈՒԾՈՒՄ

ԲՊԱԳԻՉ — ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

ՆՇԱՆ 4. ՊԷՐՊԷՐԵԱՆ

ՀԱՅԿԱՅԻՆ ԳԼԽԱՎՈՐ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՅԻՆ ԳԼԽԱՎՈՐ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՅԻՆ ԳԼԽԱՎՈՐ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՅԻՆ ԳԼԽԱՎՈՐ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՅԻՆ ԳԼԽԱՎՈՐ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՅԻՆ ԳԼԽԱՎՈՐ ԳՐԱԴԱՐԱՆ



ՀԱՅԿԱՅԻՆ ԳԼԽԱՎՈՐ ԳՐԱԴԱՐԱՆ


Տպագրիչ եւ Փորագրիչ ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ, ԷՍԿԻ ԶԱՊԹԻԷ ՃԱՏՏԷՍԻ, ԹԻԻ 61.

Թ. Է՛Յ

Թ. Է՛Յ

Թ. Է՛Յ



Ը Ն Տ Ի Ր

Հ Ո Տ Ա Ի Է Տ

Խ Ն Ա Յ Ո Ղ Ա Կ Ա Ն

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ և Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ վաճառատունը պատրաստ՝ և թէ օր ըստ օրէ հասնող թարմ և ազնուագոյն տեսակ թէյերով կրնայ այսօր անմրցելի ածանութեամբ գոհացում տալ նոյն իսկ էն խստապահանջ թէյի սիրահարներու։ ԵԱՎՐՈՒԵԱՆ եւ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ հաստատութիւնը կը թղթակցի զաւառներու հետ եւ յանձնարարութիւնները կը կատարուին ամենայն ճշդութեամբ։

Աժան, ընտիր ու հոտաւէտ թէյ գործածողներու ջերմապէս կը յանձնարարենք անգամ մը այցելել Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ և Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ վաճառատունը, ձէլալ-Պէյ խանի կից թիւ 10, ուր պիտի գտնեն մեծաքանակ և փոքրաքանակ թէյի էօր մթերք մը։

Ա Ժ Ս ՚ Ն

Ա Ժ Ա ՚ Ն

Ա Ժ Ա ՚ Ն

Բ Ա Յ Ո Ւ Ա Մ Է

Արեւելեան Մամուլ

1902 ՏԱՐԻՈՅ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Բաժանորդագրութեան համար դիմել՝
Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ ՈՐԴԻ — Իզմիր

Ստացաք ՆՇԱՆ ՊԱՊԵՐԵԱՆ Գրատունէն Հրատարակուող Երկրագործական Եւ Մանուկական Պատրաստած ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆԸ, Միջին Դասընթացի համար, պատկերազարդ։

Իր բոլոր կողմերովը նոր աշխատութիւն մըն է այս գոր ջերմապէս կը յանձնարարենք մեր ընթերցողներուն, և որ կը յու-

սանք իր արժանի ընդունելութիւնը պիտի գտնէ մեր վարժարաններուն մէջ։

Հնդարձակ տեղ տրուած է Բնական Աշխարհագրութեան, որ շատ կարեւոր ճիւղ մըն է, և որու սակայն շատ քիչ ուշադրութիւն ըրած ենք մինչեւ հիմա։ Իսկ Քաղաքական Աշխարհագրութեան մէջ անհրաժեշտը և էականը մինակ տեսնուած է, նորութիւն մը որ մանաւանդ մեզի համար ամէն կերպով գնահատելի է։

Գինն է 5 դրուշ։

Հասցէն՝

ՆՇԱՆ ՊԱՊԵՐԵԱՆ Գրատուն, Կ. Պոլիս 60, Էսկի Զապթիյէ ճատտէսի, 60

Հանրագիտակ ձեռքէ կը ծախուի Պոլսոյ մէջ հատը 40, իսկ գաւառաց մէջ 50 փարայ։